ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/59

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ Վ. Նավասարդյանի (լիազորագիր՝ տրված 09.08.2021թ.),

քննելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Արտշին-1» ՍՊԸ-ի կողմից 05.08.2021թ. ներկայացված (05.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/59 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Արտշին-1» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արտշին-1» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 05.08.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«20.07.2021թ. հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար, նույն նախարարության Միեր Մկրտչյան 5 հասցեում գտնվող «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն:

30.07.2021թ. մասնակիցներին հրավիրվել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

30.07.2021թ. ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրության համաձայն, ընտրված մասնակից է ճանաչվել «Ստարմալե» ՍՊԸ-ն, «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ն 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից, «Արտշին-1» ՍՊԸ-ն 3-րդ զբաղեցրած մասնակից:

Համաձայն հրավերի 5.1 կետի առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Սակայն սույն մրցույթի ընթացքում «Ստարմալե» ՍՊԸ-ն, «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ մասնակիցները իրենց ներկայացրած գները ավել են նվազեցվել ինքնարժեքից, որը երևում է իրենց հայտին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների շահույթ տողից:

Կարծում եմ, որ ներկայացված հանգամանքի պայմանում ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովը սխալ է կիրառել օրենքի պահանջը և անհիմն ընտրված մասնակից է ճանաչել «Ստարմալե» ՍՊԸ-ին, «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ն 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից, որով խախտել է իմ իրավունքները:

Գտնում եմ, որ «Ստարմալե» ՍՊԸ-ին և «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ին հանձնաժողովի կողմից չպետք է թույլատրվեր գները նվազեցնել իրենց ներկայացրած ինքնարժեքից ցածր:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34, 46, 50-րդ հոդվածներով՝ խնդրում եմ պարտավորեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար, նույն նախարարության Միեր Մկրտչյան 5 հասցեում գտնվող «Բ» մասնաշենքի 4- րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-2/50 ծածկագրով հանձնաժողովին անվավեր ճանաչել գնանշման հարցման արդյունքում «Ստարմալե» ՍՊԸ ընտրված

մասնակից և «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ին 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.08.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.08.2021թ. թիվ 09/11695 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի օգոստոսի 6-ի N ԲՔԱ-ԳՆ/1/12551-2021 գրության՝ «Արտշին-1» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի օգոստոսի 05-ին ներկայացված N ԳԲՔԱ-ՆԳ-2021/59 բողոքի վերաբերյալ ներկայացնում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) դիրքորոշումը.

Նախարարությունը 2021 թվականի հուլիսի 20-ին էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրապարակել է ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցման հրավեր՝ Նախարարության Միեր Մկրտչյան 5 հասցեում գտնվող «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով: ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնանշման հարցմանը հայտ են ներկայացրել թվով 10 մասնակիցներ: Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և գնահատող հանձնաժողովը, համաձայն ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնման հրավերի, բոլոր մասնակիցներին հրավիրել է գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների 2021 թվականի հուլիսի 30-ին ժամը 14:00-ին: Բանակցություններին ներկայացել են «Ստարմալե» ՍՊԸ-ի, «Շինարար Գագիկ» ՍՊԸ-ի, «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի, «Արթմաշին» ՍՊԸ-ի, «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՀԱՅԱՐՏՇԻՆ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչները:

Բանակցությունների ավարտին «Ստարմալե» ՍՊԸ-ի ներկայացրաց գինը՝ 11 850 000 /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի/ եղել է նվազագույնը և ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով

գնահատող հանձնաժողովը, համաձայն ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով գնման հրավերի, «Ստարմալե» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից:

Միաժամանակ հայտնում ենք, որ ծավալաթերթ-նախահաշվում ինքնարժեք տող նախատեսված չէ և բացակայում են «Ստարմալե» ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմքերը:

Ընտրված «Ստարմալե» ՍՊԸ-ի նվազեցրած գինը ցածր է բողոք ներկայացրած «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի գնից 580 000 ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.08.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ են ներկայացրել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊ, «Ստարմալե» ՍՊ և «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքներից ելնելով, հանձնաժողովը որոշել է «Ստարմալե» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, իսկ «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ին՝ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից:

3. «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը օրենքի սխալ կիրառման արդյունքում «Ստարմալե» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, իսկ «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ին 2-րդ

տեղը զբաղեցրած մասնակից, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չպետք է թույլատրեր վերջիններիս գները նվազեցնել իրենց ներկայացրած ինքնարժեքից ցածր, որը երևում է հայտին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների շահույթ տողից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արտշին-1» ՍՊԸ-ի 05.08.2021թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 10.08.2021թ. թիվ 09/11695 գրությունը՝ կից նյութերով, «ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ ***առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:*** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր***

կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում ***առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ***, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Եվ այսպես, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ են ներկայացրել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊ, «Ստարմալե» ՍՊ և «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքներից ելնելով, հանձնաժողովը որոշել է «Ստարմալե» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, իսկ «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ին՝ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից:

«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը օրենքի սխալ կիրառման արդյունքում «Ստարմալե» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, իսկ «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊԸ-ին 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չպետք է թույլատրեր վերջիններիս գները նվազեցնել իրենց ներկայացրած ինքնարժեքից ցածր, որը երևում է հայտին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների շահույթ տողից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի շրջանակներում «Ստարմալե» ՍՊ և «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները և ծավալաթերթ-

նախահաշիվները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունն, արձանագրում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է, ***որ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:*** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը ***գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*** Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.1 ենթակետով սահմանվել է, որ ***առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և*** **չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Նույն կետի 5.2 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ***արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)*** և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: ***Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:***

Ընթացակարգի հրավերի հավելված 2-ը՝ գնային առաջարկը, սահմանվել է հետևյալ տեսքով՝

Հավելված 2
ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով **ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50** ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	**ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մհեր Մկրտչյան 5 հասցեում գտնվող «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ**			

Ընթացակարգի հրավերի հավելված 2.1-ը՝ ծավալաթերթ-նախահաշիվը, սահմանվել է հետևյալ տեսքով՝

Հավելված 2.1
ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-21/50 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մհեր Մկրտչյան 5 հասցեում գտնվող «Բ» մասնաշենքի 4-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ

Հ.հ.	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակ	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդհանուր /ՀՀ. դրամ/
1	2	3	4	5	6
1	Գոյություն ունեցող գույքի (գրապահարան) տեղափոխում 4-րդ հարկից 1-ին հարկ	հատ	30		
2	Գոյություն ունեցող գույքի (սեղան) տեղափոխում 4-րդ հարկից 1-ին հարկ	հատ	30		
3	Հատակների քանդում (կովրալին)	մ^2	302		
4	Հատակների քանդում (մանրատախտակ)	մ^2	302		
5	կերամիկական սալիկների քանդում (Հատակներից և պատերից)	մ^2	27		
6	Պ/Բ միջնորմների քանդում	մ^2	50		
7	Լվացարանների և զուգարանակոնքերի ապամոնտաժում,տեղափոխումով աղբավայր	մ^3	1		
8	Գոյություն ունեցող օդորակիչների ապամոնտաժում և դրանց վերամոնտաժում	կ-տ	15		
9	Շին. աղբի բարձում ինքնաթափի վրա ձեռքով և տեղափոխումով աղբավայր	տն	2		

10	Ց/ա նախաշերտի վերականգնում (ներառյալ նյութի արժեքը) հաստությունը՝ 50մմ	մ^2	75		
11	Պատերի և առաստաղի մաքրում հին ներկից	մ^2	1592		
12	Լամինատե (Լամինատ 5A, 12 մմ կամ համարժեք) հատակների տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	302		
13	Պրեսգրանիտե սալիկներով հատակի իրականացում (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	27		
14	Պրեսգրանիտե սալիկներով պատերի սալիկապատում (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	80		
15	Armstrong (ալյումինեթիթեղյա,բարձր որակի) տիպի կախովի առաստաղների իրականացում (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	150		
16	Պատերի և առաստաղների ներկում լատեկսային (FBS կամ համարժեք) ներկով (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	1592		
17	Միջնորմների իրականացում պ/բ 100 մմ (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	31		
18	Մետալլոպլաստե դռների տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	մ^2	10		
19	Գոյություն ունեցող դռների մշակում և լաքապատում	մ^2	111		
20	Դռների բռնակներով կողպեքների (Բարձր որակի) տեղադրում	կ-տ	25		
21	Ց/ա նախաշերտ իրականացում (ներառյալ նյութի արժեքը) հաստությունը՝ 50 մմ	մ^2	62. 4		
22	Վարդակների (Legrand կամ համարժեք) տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	հատ	120		
23	Անջատիչների (Legrand կամ համարժեք) տեղադրում (մեկ տեղանոց) ներառյալ նյութի արժեքը	հատ	36		
24	Պատերի վրա լարանցման համար խրամուղիների բացում	գծմ	1584		
25	3x2.5մմ մալուխի (երկլարանի, պղնձե) անցկացում (ներառյալ նյութի արժեքը)	գծմ	600		
26	3x4մմ մալուխի (երկլարանի, պղնձե) անցկացում (ներառյալ նյութի արժեքը)	գծմ	888		
27	3x10մմ մալուխի (երկլարանի, պղնձե) անցկացում (ներառյալ նյութի արժեքը)	գծմ	264		
28	Բաժանման տուփերի մոնտաժ (ներառյալ նյութի արժեքը)	հատ	54		
29	Ավտոմատ անջատիչների տեղադրում 25A (Legrand կամ համարժեք) (ներառյալ նյութի արժեքը)	հատ	6		
30	Ավտոմատ անջատիչների տեղադրում 32A (Legrand կամ համարժեք) (ներառյալ	հատ	12		

	նյութի արժեքը)				
31	Ավտոմատ անջատիչների տեղադրում 64A (Legrand կամ համարժեք) (ներառյալ նյութի արժեքը)	հատ	4		
32	Ավտոմատ անջատիչների տեղադրում 16A (Legrand կամ համարժեք) (ներառյալ նյութի արժեքը)	հատ	2		
33	Լուսատուների 18W (Torch կամ համարժեք) տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	հատ	130		
34	Ճկախողովակի տեղադրում	գծմ	1752		
35	PVC DE110 խողովակի մոնտաժում, ներառյալ ձևավոր մասերը (ներառյալ նյութի արժեքը)	գծմ	8		
36	PVC DE50 խողովակի մոնտաժում, ներառյալ ձևավոր մասերը (ներառյալ նյութի արժեքը)	գծմ	16		
37	Զուգարանակոնքի (Rosa կամ համարժեք) տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	կոմպլ	2		
38	Լվացարանի (Rosa կամ համարժեք) տեղադրում	կոմպլ	2		
39	PPR DE 20 խողովակի մոնտաժում, ներառյալ ձևավոր մասերը (ներառյալ նյութի արժեքը)	գծմ	30		
40	D N 15 փականների տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	հատ	12		
41	Հոսակի տեղադրում (ներառյալ նյութի արժեքը)	հատ	2		
	Ընդամենը				
	Վերադիր ծախսեր՝ %				
	Ընդամենը				
	Շահույթ %				
	Ընդամենը				
	ԱԱՀ 20%				
	Ընդամենը				

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Հայաստանի հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21 մայիսի 2020 թվականի N 778-Ն որոշման համաձայն՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ մասնակիցը ***գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)*** **և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:**

Ընդ որում՝ հարկ եմ համարում արձանագրել, որ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) առկա տեղեկատվության համաձայն՝ որպես Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի նոր խմբագրման անհրաժեշտության հիմնավորում նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկը չի կարող պակաս լինել այդ գնման առարկայի ինքնարժեքից: Գործող կարգավորման համաձայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: ***<u>Գնային առաջարկների նվազեցման բանակցություններն ավելի ճկուն դարձնելու նպատակով նախատեսվում է մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկում շահույթն առանձին չարտացոլել և այն գումարելով ինքնարժեքին՝ ներառել «արժեք» հասկացության մեջ:</u>***

Փաստացի գնումների գործընթացի կազմակերպման կարգի գործող կարգավորման և Ընթացակարգի հրավերի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, այսինքն՝ ինքնարժեք տողը առանձին արտացոլված չէ, միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ թեև Ընթացակարգի հրավերի հավելված 2.1-ում՝ ծավալաթերթ-նախահաշվում, շահույթ տողն արտացոլված է առանձին տողով, այնուամենայնիվ՝ ծավալաթերթ-նախահաշվում ինքնարժեք տող նախատեսված չէ, որը տվյալ դեպքում հնարավորություն կտար գնահատելու արդյոք ընկերությունների կողմից գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում ծավալաթերթ-նախահաշվով ներկայացված գները ինքնարժեքից պակաս են, թե՞ ոչ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները չեն հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներին, քանի որ նշված կետի հստակ պահանջ է, որ առաջարկվող գինը չի կարող պակաս լինել նույն կետով սահմանված ծախսերի ինքնարժեքից:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ բացակայում են Ստարմալե» ՍՊ և «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու հիմքերը, ուստի «Արտշին-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արտշին-1» ՍՊԸ-ի կողմից 05.08.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**